

ԹՈՒՐԳ ՄԱՄՈՒԼԸ

Շահթախթինսկի և Աղայեվ դատի մէջ—Աղայեվ բէգի ողբերը—Հնդկաստանի մահմեդականների մէջ կրօնական վերանորոգչական մի շարժում—Կովկասի իսլամների վերաբերմունքը դէպի այդ շարժումը—Մահմեդական մամուլի օրդանները այլ և այլ երկրներում:

Անցեալ անգամ մենք խօսեցինք Մէհմէդ աղա Շահթախթինսկիի և Աղայեվի ընկերակցութեան մասին՝ «Շարքի-Ռուսը» վարելու գործում, և այն նոր ծրագրի վերաբերմամբ, որին պիտի հետևէր թուրք թերթը Բագու փոխադրուելով: Ահա մի քանի ամիս է որ «Շարքի-Ռուսը» Բագու է տեղափոխուած և նա դեռ ևս չկարողացաւ լոյս տեսնել: Եւ եթէ այս ընթացքով գնայ, լոյս տեսնելիք էլ չունի: Որովհետեւ, ինչպէս երեւում է, Մէհմէդ աղայի և Ահմէդ բէգի համաձայնութիւնը շատ խախտու է եղել և նրանց մէջ ծագել են արդէն լուրջ տարաձայնութիւններ: Այդ վէճի պատճառն այն է, որ Մէհմէդ աղան, ըստ երևոյթին, չի ուզում նրան գերշխող դեր տալ: Եւ որովհետեւ Աղայեվը Շահթախթինսկիին վճարել է արդէն մի որոշ գումար, նա յենուելով այդ կանխավճարի տուած իրաւունքի վրայ, պահանջում թերթի ղեկավարութիւնը: Իսկ Մէհմէդ աղա չի գիշում: Սրանից ծնունդ է առել կռիւը, և գործը պէտք է ելնէ նոյնիսկ դատարանի առաջ:

Մենք հաւատարիմ մեր կոչումին, շարունակենք իսլամական մտքի ընդունման մեր գործը, սպասելով դատավարութեան ելքին:

Եւ որովհետեւ Աղայեվի՝ Շահթախթինսկու հետ հաշտութիւնից յետոյ, «Շարքի-Ռուսին» տոն տուողը Աղայեվն էր, այս վերջինի յօդուածներն էին, որ թուրք լրագրին և մահմեդական հասարակութեան ուղղութիւն էին մատնանշում, խօսենք այս յօդուածների մասին:

«Շարքի-Ռուսի» 219-րդ համարում, Աղայեվ ղետեղել է երկւոր, 5 սիւնակից բաղկացած մի յօդուած, որը չէ վերջացած և կրում է «շարունակելի» պոչը:

Այդ յօդուածի ընդհանուր վերնագիրն է «Իսլամական խորհրդածութիւններ» և տիտղոսը՝ «Ղուրանից ընթերցումներ»:

Աղայեվ իր ուսումը Պարիզում ստացած մարդ է: Հետա-

քրքիր էր իմանալ, թէ Եւրոպայում ժողովուրդը դէպի լուսաւորութիւն, դէպի բազմաթիւութիւն առաջնորդելու համար արդեօք հրապարակաօսները նստում՝ նրան Աւետարանը կամ Ս. Գլխքն են մեկնում, մեկնաբանում... Բայց զեռ տեսնենք, թէ թուրք ժողովրդի ղեկավարը ի՞նչ է ասում։ Նախ մի կտոր յօդուածի սկզբնաւորութիւնից։

«Ղուրանը կարգալիս հրճուանքս ու վայելքս աւելանում են. մահմեդական և օտար լեզուների քիչ ու շատ ծանօթ եմ, ընթերցումի սէր ունիմ. թէև զանազան գրքեր և գրութեանք կարդում եմ, բայց ոչ մէկը զրանցից այն հաճոյն ու հրճուանքը չի պատճառում ինձ, որքան ղուրանը... Ղուրանից համեղ, ղուրանից բերկրաւոր զիրք չկայ։ Թէ բանաստեղծութիւն է, թէ պատմութիւն, թէ փիլիսոփայութիւն է, թէ քարոզչութիւն, թէ պատուէր, թէ օրինակ. այն կարգալով՝ մարդու սրտի ու մտքի կեանքը կրանութեամբ յորդում է. մէկ սյալթ-ը, մէկ սուրէշ-ն որքան կարգաս ձանձրոյթ և տաղտուկ չես զգում, ընդհակառակը, հետզհետէ նրա իմաստին աւելի թափանցելով աւելի լցւում ես վայելքով։ Ափսոս, հազար ափսոս, որ այս տեսակ մի ազիզ, համեղ գիրք, մեղանում վարկից ընկնելով պէտք եղած յարգն ու պատիւը չի վայելում»։

Այս քնարերգական տողերից յետոյ, որոնք գրութեան լինին կարծես երկնքի գաղափարովը չարչարուող, միտաբական ցընորքներով ալեկոծուող միջնադարեան մի ճգնաւորի, ասկետի կողմից, Աղայեւ աւելացնում է, թէ, իր «սիրտը» դր աստիճան՝ «ճմլւում է», երբ մտածում է ղուրանի այդ վարկաբեկութեան մասին։

«Մեղանում ի՞նչ կայ, բացառանչում է նա. գիտութիւն չկայ, արուեստ չկայ, միայն տգիտութիւնն է տիրապետում. որ կողմ նայես, նայիր, ամեն տեղ սիրտ մրմնացնող, խելքը ապուշ կրթող, ահաւոր, սարսափելի, խաւար ամպեր պաշարել են իսլամական աշխարհը. ոչ մի տեղից լոյսի նշոյլ չի երևում։ Ամեն կողմից տգիտութիւնն ու խաւարը բարձր պարսպի նման մեղ շրջապատել է։ Ի՞նչ եղաւ Աստուծոյ որ գործերը այս դրութեան հասան։ Այս սրտաճմլիկ, հոգեխորով ներկայից աչքերս զարձնում եմ դէպի անցեալը։ Իսլամի անցեալ օրերն եմ յիշում...»

Ու Աղայեւ դարձեալ լիրիկական խանդավառութեամբ վերակոչում է արաբական անցեալը։

«... Բազդատի լուսավառ փողոցները, բարձր շինութիւնները, բիւրաւոր ճիւղ, բազմաւոր ընակիչները՝ մտքիս առաջ պատկերանում են։ Տեսակ տեսակ գրադարաններ, համալսա-

րաններ, բարձրագոյն մեղրէսէներ, երևակայութեանս մէջ վերակենդանանում են»»

Ու նկարագրութիւնները նկարագրութիւններին են յաջորդում ցոյց տալու համար արբաբ քաղաքակրթութիւնը իր ամբողջ փայլին ու փառահեղութեան մէջ: Եւ իսկապէս, մենք էլ դիտելով այդ շքեղ պատկերը՝ հիացումով և յուզումով լեցւում ենք: Մի հարց, անխուսափելի, բռնաւոր, չարչարող, ներկայանում է մեր մտքին — միթէ սրանք են այդ լուսաւոր, պանծալի նախնիքների յաջորդները: Արարները քաղաքակրթութեան, կուլտուրական կեանքի զինուորներ էին: Իսկ նրանց զաւակները, այժմեան մահմեդականները: «Ամեն կողմից տգիտութիւնն ու խաւարը բարձր պարիսպի նման շրջապատում է մեզ» տխրութեամբ նշկատում է ինքը՝ Աղայեւ:

Եւ ինչո՞ւ է այդ աչք ծակող զանազանութիւնը: Ի հարկէ ընթերցող, դուք էլ ինձ պէս պիտի հետաքրքրուէք, թէ ճրտեղ է պահուած առաջինների փառքի, և երկրորդների անփառունակութեան, անկումի գաղտնիքը. ի հարկէ դուք էլ պիտի սպասէք, որ Աղայեւը մեզ տայ այդ գաղտնիքի բնալիւն: Բայց իզո՞ւր: Աղայեւ այդ յուզիչ, սիրտ մրմուռացնող տարբերութեան պատճառներով չէ հետաքրքրւում, նա այդ վրդովեցուցիչ հակապատկերներից չէ հանում տրամաբանական, կրթիչ դասը: Նա եռանդուն կոչ է անում մահմեդականներին կարգաւ դուրանը: Անկասկած մահմեդականները՝ իբրև կրօնական ժողովուրդ՝ պէտք է դիմեն իրանց Ս. Գրքին, պէտք է կարգան դուրանը: Բայց միթէ դուրանով միայն պիտի վերածնուի արարական քաղաքակրթութիւնը իր աճիւնից: Ղուրանը մի կրօնագիրք է, և ինչպէս ամեն կրօնագիրք, նա կոչուած է բաւականութիւն տալու հոգու պահանջներին, խղճի յարուցած հարցերին: Իսկ քաղաքակրթութիւնը, առաջադիմութիւնը հիմնուած է բանականութեան վրայ. և մտքին, բանականութեան սրնունդ է տալիս գիտութիւնը — այս բառը առնելով իր հին, ընդարձակ իմաստով — այսինքն այն ամենը, որ մտնում են մարդկային ծանօթութիւնների շրջանակում:

Աղայեւը, ի հարկէ, մեզանից աւելի լաւ պիտի իմանայ թէ ի՞նչն էր կազմում արաբական մեծութեան հիմքը: Ի՞նչն էր կազմում Ավէրրոէսների, Ալ-Բաշխիւների փառքը:

— Որովհետև նրանք իրանց ժամանակի գիտութեան ջանակիրներն էին, որովհետև նրանք աշխատում էին ընդարձակել և խորացնել մարդկային մտածողութեանը, որովհետև նրանք հանճարեղ աշակերտներն էին հելլենական և մասնաւորապէս արիստոտէլեան փիլիսոփայութեան, որը նրանք մեկ-

նում, մեկնաբանում և տարածում էին իրանց շուրջը: Երբ Վերածնունդի գործառույթները դեռ չէին հասնել յոյն քաղաքակրթության յիշատակարանները փոշիների տակից, արաբներն էին, որ իրանց իմաստասիրական աշխատությունների միջից ցոլացնում էին յունական միտքը: Պ. Աղայեվ, ձեր արդարացի հիացումով յիշատակած «տեսակ տեսակ գրադարանները, համալսարանները, բարձր դպրոցները» պարծանքի առարկաներ էին ոչ թէ նրա համար որ այնտեղ դուրանն էր տիրապետում, այլ այն ժամանակուայ գիտությունը:

Հայերը գիտություն, լճյա էին աղաղակում, իսկ որդիները կրճնք, հաւատք են գոչում:

Ահա սրտեղ է հսկայ հայրերի և գաճաճ որդիների զանազանությունը...

Բայց շարունակենք, որովհետեւ պ. Աղայեվը մեզ ուրիշ անակնկալներ ունի պահած: Նա հարց է տալիս, թէ ինչո՞ւ է այդ տարբերությունը: Նւ պատասխանում է.

—Որովհետեւ Աստուծոյ փորձանքն անցաւ մեր գլխի վերայից, որովհետեւ մեզ ուղարկուած սուրբ դիրքը մոռացանք, հրաժարուեցինք նրա առաքինութեամբ օժտուելուց: Ղուբանի փոխարէն անիմաստ երազների, անմիտ ցնորքների ետեից ընկանք: Մեր աչքերը կապուեցին, մեր սրտերը ժանգոտեցին, մեր խելքերը մոլորուեցին ու մեր ճամբան կորցրինք: Դայլի ընատրուլթին ունեցողները զառնուկի մորթի մէջ մտնելով էլ, աւելի շփոթութեան մատնուեցին: Ամենքը մեզ իրանց կողմը քաշ տալով՝ իրանց սեպհական նպատակներին ծառայեցրին: Մեր հոգին, մեր խելքը, մեր աշխարհն ու մեր հանդերձեալ կեանքը մեր ճեղքից խլեցին: Դարձեալ կրկնում եմ, այս բոլոր դժբախտությունների պատճառն այն է, որ մենք դուրանը մոռացանք, Աստուծոյ փորձանքը մեր գլխին իջաւ...

Ահա այսպէս է տրամաբանում պ. Աղայեվ փիլիսոփայ հայրերի պարզամիտ զաւակը կարծում է, աւանդ, որ մահմեդականները քարաական գեղեցիկ քաղաքակրթութեան յարուսթին տալու համար պէտք է սրեն ոչ թէ իրանց միտքը, իրանց ուղեղը, այլ իրանց ատամները, իրանց ժանիքները, նրանք պէտք է դառնան «գայլեր», մտնեն «գայլի բնաւրութեան», «գայլի մորթի» մէջ...

Բայց այսքանն արդէն բաւական է, այս անգամուայ համար: Մենք կը շարունակենք յաջորդ անգամ այս շատ հետաքրքիր ու տարօրինակ դասը, որ տալիս պ. Աղայեվ մեզ՝ իր յօդուածների ընթերցողներին՝ թէ լճն ինչո՞քներով կարելի է

հասնել քաղաքակիրթ կեանքի բարձրութեան: Այժմ լսենք ուրիշ ձայներ:

*
* *

Մինչդեռ պ. Աղայնի մահմեդականներին հրաւիրում էր կրօնքով վերածնունել, Ղրիմում հրատարակուող «Թէրջիման» լրագրի պատմութեան համեմատ, մի խումբ կալկաթայաբնակ մահմեդականներ իրանց հաւատակիցների փրկութեան միջոցը որոնում կրօնքի վերանորոգութեան ուղիներում: Նրանք մըտածում են, որ իսլամական այն հաւատալիքները, որով դեկավարում են իրանց կրօնակիցները, հնացել են, չեն կարողանում գոհացնել Իսլամի դաւակների քաղաքակրթական պահանջները: Այս կերպ խօսողների պարագլուխը՝ Սէյիդ Հայդար, Հնդկաստանի մահմեդական մի բարձրագոյն դպրոցի շրջանաւարտ՝ յիշեալ հարցի մասին մի մեծ յօդուած է հրատարակել, որը Հնդկաստանի բոլոր լրագրները անմիջապէս թարգմանել և տպել են: Այդ յօդուածով Սէյիդ Հայդար կոչ է անում բոլոր համախոհներին, որ ժողովուրդն և իրանց դաւանանքը մի գլուխով պարփակելով հիմքը դնեն իրանց կրօնքին: Ահա թէ որոնք են այդ նորադանդների հաւատի հանգանակի գլխաւոր գծերը:

1) Չընդունել բազմակնութիւնը. իսլամական կրօնքը մի կնոջ հետ ամուսնանալը թոյլ է տալիս, և բազմակնութիւնը վերացնելուն համաձիտ է:

2) Իսլամական կրօնը՝ կանանց բաց ման գալը չէ արգելում և չի հրամայում անպատճառ ծածկուած լինել:

3) Իսլամական շարիաթը տոկոսը արտօնում է, այսինքն փողը փողով վարձու տալու մէջ անպատեհութիւն չի գըտնում: (?)

4) Ապահարզանը խիստ ձեռով դրուելը հրամայում է.

5) Սուրբ զուրանը պէտք է մեկնել ժամանակակից ուսման և գիտութեան բարձրագոյն աստիճանի համաձայն:

6) Սուրբ զուրանը ուրիշ լեզուներով էլ թարգմանելով՝ ուրիշ ցեղերի և ժողովուրդների (երևի իսլամադաւան) էլ հասկանալի դարձնել, որպէսզի նրանք իրանց աղօթքները իրանց լեզուով կատարեն, ինչ որ իսլամական օրէնքը թոյլ է տալիս: Յօդուածագիր Սէյիդ Հայդարի համեմատ՝ մահմեդականութեան ապագան, իսլամների բախտաւորութիւնը կախուած է այդ վեց պատուիրանների հաւատարիմ գործադրութիւնից:

«Թէրջիման» լրագիրը, որ տալիս է այս տեղեկութիւնները, որոնք, պէտք է ասել, բաւական շփոթ են—աւելացնում է իր կողմից:

«Առաջին ասում է. ամենքի նպատակը նոյն է, ուղիներն են տարբեր. ժամանակակից մահմետականների ամեն տեսակէտով յետաճանաչութիւնը հաստատում են ներկայ դարի գիտութեան և առաջադիմութեան ծանօթ մահմետական գիտնականներն (կրօնաւոր) իսկ. և հաւատակից եղբայրների բարեբախտութեան միջոցների մասին մտածելնուն համար է որ՝ այլ և այլ երկրների իսլամական քաղաքներում այս կարգի հասարակական վիճարանութիւններ տեղի են ունենում...»

Մենք ակնարկեցինք, որ Սէյիդ Հայդարի ղեկավարութեամբ Հնդկաստանում ծնունդ առած վերանորոգչական շարժման մասին «Թէրջլիման»-ի հաղորդած տեղեկութիւնները բաւական յստակ չեն: Արդարեւ հետաքրքիր էր իմանալ, թէ այդ շարժումը, որ՝ դարձեալ նոյն «Թէրջլիմանի» ասելով Հնդկաստանի մահմետականների միջև մեծ պառակտումների առիթ է դարձել, ի՞նչ նշկարադիր ունի. արդեօք մահմետական կրօնի էութիւնը անխախտ պահելով՝ ձգտում են նրա ծէսերի և ձևական կողմերի մէջ փոփոխութիւն մտցնել, թէ Սէյիդ Հայդար և իր կուսակիցները փորձում եմ հիմնել մի բոլորովին տարբեր կրօնք, ինչպէս օրինակ բարիականութիւնը, Պարսկաստանում:

Յամինայն դէպս այդ շարժումը՝ Կովկասի մահմեդականներին, և, հաւանականաբար, այլ երկրներում ապրող իսլամներին դուր գալու երևոյթը չունի: Գոնէ այդպէս է ցոյց տալիս Ռէշիդ էֆէնդի Իբրահիմօֆի, «Միրաթ» թուրք լրագրի խմբագրի մի ցատկոտ յօդուածը, որ տպուած է «Շարքի-Ռուսի» № 224-ում: Իբրահիմօֆ՝ Շահթախթինսկիի ազդեցիկ աշխատակիցներից մէկը՝ «Քաղաքակրթութիւն, թէ տգիտութիւն» վերնադրուած իր յօդուածում բուռն կերպով յարձակում է նախ «Թէրջլիմանի» վրայ, որ «Հնդկաստանի անհաւատներից մէկի բերանով իսլամական մի նոր կրօնք է հիմնում»: Յետոյ մի առ մի ըննում և ըննադատում է վերև առաջ բերուած վեց կէտերը: Իբրահիմօֆի յօդուածը շատ երկար է. կարելի է նրա ողորդ մասին գաղափար կազմել հետեւալ հատուածից.

«Այդ նորահաստատ կրօնի առաջին կէտի համաձայն՝ ամէն մահմետական մի կինով պէտք է բաւականանա, երկրորդը՝ — ամօթխածութիւնը վանում է, երրորդը՝ վճռապէս հարամ եղած բանը հալալ է յայտարարում, չորրորդը՝ որքան կարելի է պոռնիկների բազմանալուն առիթ է հայթայթում, հինգերորդը՝ սուրբ դուրանը՝ աւետարանների և աստուածաշունչների կարգը դասելով՝ նրա մէջ պարունակուող պատուէրների գործադրութիւն է քարոզում»

Թուրք տրամաբանութիւնը իսկապէս զարմանալի տրամա-

բանութիւն է: Ռէշիտ էֆէնդի Իբրահիմովը սարսափում է այն մտքից, որ մի գուցէ Ղուրանը տարբեր ցեղի մահմետականների լեզուով թարգմանուի և մեկնաբանուի: Բայց թիւնչ արժէք կարող է ունենալ այն կրօնագիրքը, երբ նրա հետեւողների համար նա կատարելապէս մեռած տառ է: Խնչպէս այլացեղ մահմետականները Իսլամի հետեւողներ կարող են համարուել, լինել, երբ նրանք չգիտեն թէ թիւնչ է պատուիրում իրանց կրօնքը:

*
* *

«Շարքի-Ռուաի» № 14-ի մէջ նոյն Արդ-իւլ-Րէշիդ Իբրահիմովը «Մահմեդականների վարժապետանոցը» վերնագիրը կրող մի յօդուածով տեղեկութիւններ է տալիս այժմ գոյութիւն ունեցող թուրք վարժապետանոցի մասին:

Յօդուածագիրը պատմում է թէ Օրէնքուրգում մահմեդականներն ունէին մի վարժապետանոց, որին պատակն էր ուսուցիչներ պատրաստել իսլամ դպրոցների համար: Այդ հաստատութեան ծրագիրը համահաւասար էր գիմնագիւմների ծրագրին: Վարժապետանոցի տնօրէնը՝ կարող, ընդունակ, ուսուցիչ և թուրքերէն լեզուին լաւ ծանօթ մի մահմեդական էր. ուսուցիչները նոյնպէս զարգացած մահմեդականներ էին: Դպրոցի դասաւանդութեան լեզուն թուրքերէնն էր. սովորեցնում էին և որոշ չափով արաբերէն: Վարժապետանոցը հասցրեց բաւական թուով ուսուցիչներ: Բայց այդ օգտակար հիմնարկութիւնը, յայտնի չէ թիւնչ պատճառներով Օրէնքուրգից փոխադրուեց Կադան: Կադանի մահմեդականների խնդրանքով՝ ուսուցչանոցի տնօրէն նշանակուեց մի մահմեդական և այն էլ ճշմարիտ մահմեդական: Եւ արդէն, դիտել է տալիս յօդուածագիրը, դպրոցի հիմնարկութեան ժամանակ՝ տեսուչի մահմեդական լինելը անհրաժեշտ պայման էր: Բայց, Կադանում, նախ ուսուցիչները փոխուեցին, և քիչ ժամանակ յետոյ՝ տնօրէնը, որի տեղ դրին մի ուսուի: Այդ ուսուը ամուսնացաւ մի իսլամ կնոջ հետ... մահմեդական ծէսերի համեմատ: «Ղուրբան» կտրեց, «ղուրան» կարդալ տուեց և ամուսնութեան գիշերները իմամներին փող ընծայեց: Ահա մինչև այս աստիճան՝ ուստնօրէնը՝ մահմեդականութիւն ընդունեց: Կադանի մահմեդականները՝ մեր Նէնիկին տնօրէնը մահմեդական դարձաւ ասելով՝ հրճուեցին: Բայց նրանց ուրախութիւնը երկար չտևեց. բանից դուրս եկաւ, որ նրանք խաբուած են. այդ «ուսու»-ը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի հրէայ: Ապա թէ ոչ, նկատում է Իբրահիմով, թիւնչպէս մի ուսու կարող է մահմեդականութիւն ըն-

դուռնել, քանի որ այդ՝ օրէնքով արգելուած է Ռուսաստանում:
Մինչ այս, մինչ այն, դպրոցի նկարագիրը փոխւում է. աշակերտները կրթւում, դաստիարակւում են բոլորովին այլ ոգով: Նրանք սկսում են ծաղրել իսլամութիւնը: Այս վերջին տարիներս աննպատակայարմար կրթութիւնը այն աստիճան առաջ է գնում, որ մահմեդական աշակերտները զգւում են դպրոցից և վարժապետանոցը չի ծառայում իր իսկական նպատակին:

«Կառավարութիւնը այդ ուսումնարանը բաց անել տուեց այն նպատակով, վերջացնում է խօսքը յօդուածագիրը, որ ծառայէ զուտ մահմեդական շահերին: Սակայն վատ, յոռի վարչութիւնը դպրոցը այդ դրութեան հասցրեց: Ի հարկէ այսուհետեւ ամէն մարդ պիտի խուսափի իր զաւակը այդ ուսումնարանը ուղարկելուց: Մահմեդականները ոչ մի ժամանակ ուսումից չեն խոյս տալիս. ուսումը ամենքի համար ցանկալի է. սակայն եթէ մահմեդականները մի փափագ ունին, այդ էլ կրօնքի և ուսմունքի հաւասարապէս ծառայելն է: Մեր հայրերի և պապերի կրօնքը թողնելով ուսման հետապնդել, ուսում ստանալ չէ. դա բարքերի ապականութիւն է պարզապէս»:

*
* *

«Շարքի-Ռուսի» կարող աշխատակիցներից Գրիչ, որի մի քանի յօդուածները ժամանակին ծանօթացրել ենք արդէն մեր ընթերցողներին, նոյն լրագրի № 241-ում, «Մահմեդական լրագրները» վերնագրով մի յօդուածում ամփոփ տեղեկութիւններ է տալիս իսլամ պարբերական հրատարակութիւնների մասին, որոնց վերաբերմամբ մեր և օտար ընթերցողները համարեա կատարեալ խաւարի մէջ են:

«Այս աշխարհում, գրում է «Դալէմ», ամեն մարդ մի բանի խենթ է. հանգուցեալ Զիա փաշան ասել է. «աշխարհում որքան դուխ, այնքան խենթ կայ»: Մէկը ձիուն է սիրում, միւսը շանը, միւսը կնոջը, միւսը դինի, մի ուրիշը նամակաւորօշմների, բաց նամակների ժողովածու կայն. ես էլ լրագրի խենթ էի. մի ժամանակ ինձ ծանօթ լեզուներով, թուրքերէն, արաբերէն, ֆրանսերէն, սրտեղ, ինչ լրագրի հրատարակուելը որ լսէի, անպատճառ նրանցից գոնէ մէկ քանի համար բերել պիտի տայի, իմանալով՝ թէ ինչ ուղղութեան են հետևում, ինչ մտքեր են արծարծում: Մի լաւ գիրք, մի գեղեցիկ յօդուած կարդալով մեծ դուարձութիւն էի զգում, մոռանում էի իմ բոլոր վշտերը, բռնաւորութիւնս մեղմանում էր, դէպի ամենը և ամենքը բարու-

Թեամբ, սիրով լցւում էի...» Բայց, պատմում է յօդուածագիրը՝ վաճառականութեան հոգսերի մէջ ընկղմուած լինելով՝ այժմ չեն կարողանում այդ «խենթութեան» լիովին բաւականութիւն տալ, մանաւանդ որ արտասահմանի լրագիրները իրանց համեմուտ հոտը կորցրած են մտնում Ռուսաստան, շնորհիւ գրաքննութեան: Եւ որովհետեւ իր ծանօթներից շատերը դիմում են իրան՝ արտասահման հրատարակող լրագրների մասին տեղեկութիւն խնդրելու, նա՝ այս յօդուածը գրում է դրանց հետաքրքրութիւնը գոհացնելու համար:

«Արտասահմանում իսլամ լեզուով լոյս տեսնող լրագրների ընթերցումից հրաժարուելուս պատճառները մէկից աւելի են: Այդ պատճառներից ամենագլխաւորն այն է, որ կարգին անկողմնակալ, հիմնաւոր, ընդարձակ բովանդակութեամբ իսլամ լրագիր չկայ: Իսկ մեզ համար այդ տեսակ մի թերթ անհրաժեշտ է: Թուրքերէն ամենամեծ լրագիրներն ու հանդէսները, ընականաբար, Կ. Պոլսում են լոյս տեսնում: Թուրքերի մէջ շատ կան կարող, զարգացած անձեր, գրական և քաղաքական խիստ գեղեցիկ և հիմնաւոր յօդուածներ արտադրելու ընդունակ գրողներ, գրականագէտներ և մինչև անգամ բանաստեղծներ: Սակայն, Թուրքիայում, գրաքննութիւնը չափազանց խիստ լինելով, առ հասարակ ոչ մի գրող իր գիտցածն ու մտածածը չէ կարողանում արտայայտել. կառավարական ուղղութեան ինչ կերպ որ ձեռնտու է, այն կերպ գրում են, կամայ ակամայ: Այս պատճառով էլ, այժմ շատ դժուար է Պոլսի լրագրներից մի բան օգտուել:

«Պոլսում հրատարակում են հետեւեալ օրաթերթերը. «Բիդդամ», «Թէրջիմանը-Հակիկաթ», «Մարահ»: Պոլսի պատկերազարդ հանդէսներից լաւագոյնն է «Սէրվէթը Ֆինուս»-ը: «Մալիւմաթը» ունի մի քանի հրատարակութիւն. քաղաքական օրաթերթ, շաբաթաթերթ, և նոյնիսկ ֆրանսերէն և արաբերէն առանձին տպագրութիւն: Բայց նրա խմբագրի՝ Էսսէյդ Մէհմէդ Թահիր *) բէգի հրապարակից քաջուելու պատճառով՝ այս խեղճ հրատարակութիւնները անհետացան:

«Բացի Պոլսի լրագրներից, Եւրոպայում, Եգիպտոսում, Բուլղարիայում ևս մի շարք հրատարակութիւններ լոյս տեսան, որոնց մի քանիսը դեռ ևս շարունակում են հրատարակուել: Սրանց մէջ, Բուլղարիայում լոյս տեսնողները, միշտ աչքի են ընկել իրանց դիւրահասկանալի լեզուով, ազատամտու-

*) Թահիր բէգի, նրա շահատակութիւնների մասին կարգաւ «Մուրէֆ» 1904 թ. № 4, «Պատուանշաններու առուտուրը» վերնագրով յօդուածը:

թեամբ և համարձակ խօսքով: Բուլգարիայում հրատարակուող իմ ճանաչած լրագրներն են հետևեալները. «Իթթիֆագ», «Էմնէյէթ», «Ղայրէթ», «Մովաղէնէ»: «Մովաղէնէ»-ից դուրս՝ միւսների հրատարակուիլն ու չհրատարակուիլը ինձ անծանօթ է այժմ: «Մովաղէնէ»-ն հրատարակում է Ֆիլիպէում և բաժանորդագրին արժէ մօտաւորապէս 7 ռուբլի:

«Եւրոպայում և Եգիպտոսում լոյս տեսնող լրագրների մեծ մասը, և գուցէ բոլորը՝ հրատարակում էին Պոլսից հեռացած Երիտասարդ-Թիւրքերի ձեռքով: Այդ հրատարակութիւնների իսկական նպատակը, ուղղութիւնն էր՝ բողոքել Թիւրք կառավարութեան վարչական գործունէութեան դէմ, առաջնորդել դէպի կրթութիւնն ու դիտութիւնը, առաջադիմութիւնն ու լոյսը: Սրանցից ոմանք, թէև որոշ չափով խիստ լեզու գործ էին անում, բայց մահմեդականներին չէին դրդում ապստամբութեան, խառնակութեան և կամ ուրիշ ազգերի հետ թշնամութեան, հակառակութեան. նրանց միակ ցանկութիւնն էր կազմում ընդհանրապէս մահմեդականներին և մասնաւորապէս Թիւրքերին մտցնել եւրոպական քաղաքակրթութեան մէջ և իրանց իրաւունքները պաշտպանելով իրրև մարդ ապրելու հրաւիրել: Եւրոպայում և Եգիպտոսում ապրող Երիտասարդ-Թիւրքերի մէջ կան շատ ընդունակ, զարգացած գրագէտներ, կարող հրապարակախօսներ, գիտուն բժիշկներ, և ուրիշ կարգի ինտելիգենտ անձեր, որոնք գրչով և խօսքով ծառայում էին իրանց ժողովուրդին և իրանց լրագիրներով բաց էին անում մահմեդականների մտքերը, շարժում էին նրանց գութը, և մի խօսքով շատ օգտակար գործ կատարում: Սրանցից շատերը, թէ քչերը լոյս են տեսնում. չգիտեմ. ինձ ծանօթ լրագրներն էին հետևեալները. Լոնդոնում՝ «Հուլրիյէթ», Պարիզում՝ «Բնջիլի Զավուշ», «Մէշլէրէթ», «Շուրայը Իւմմէթ», Ժնէվում՝ «Օսմանլը», «Հակիկաթ», «Միզան», «Ինթիրահ», «Ինթիկամ», Եգիպտոսում՝ «Կանունը Էսասի», «Մանջակ», «Ֆէրեատ»: Մի ժամանակ Բոսնա-Հէրցեկոյում՝ «Վաթան», և Կիպրոս կղզում՝ «Ջէման» անունով մի մի լրագիր էին հրատարակում: Սրանց հրատարակիչները Երիտասարդ-Թիւրքերի կուսակցութեան չպատկանելով՝ իրանց լրագիրները անկողմնակալ էին: Այժմ չգիտեմ թէ ի՞նչ դրութեան մէջ են: Ներկայումս շատ են գոլում Եգիպտոսում հրատարակուող «Թիւրք» լրագիրը: Եւ եթէ դատենք՝ «Թէրլիմանի» և «Շարքի-Ռուսի» մէջ այդ լրագրից քաղուածօրէն առաջ բերուած յօդուածներից, երևում է որ նա անկողմնակալ, կարծիքը արձակ յայտնող, պարզալեզու լրագիր է: Նրա տարեկան բաժնեգրին է 5—6 ռուբլի չափ: Եգիպտոսում ա-

բարերէն շատ կարգին լրագիրներ և ժողովածուներ հրատարակուած են թէև, բայց դժբաղդարար նրանցից օգտուելու կարող, արարերէնի լաւ ծանօթ անձեր մեզանում հազուադիւս են: Բայց և այնպէս մէղրէսէներում ուսանող մեր աշակերտները քսան տարի պարապուած են արարերէնով, իրանց հասակն առնում են շարունակ արարերէն սովորելով և սովորեցնելով: Դրա պատճառն այն է, որ մեր ուսումնարաններում կարգ, կանոն, մանկավարժական մէթոդ չկայ. օրինաւոր դասադրքեր չկան:

«Արտասահմանի լրագրների ընթերցումից հրաժարուելու պատճառներից մէկն էլ այն է, որ նրանք երբեք կանոնաւորապէս չէին ստացուում: Հաւաքուած էին պրաքնական գրասենեակներում. և մէկ էլ տեսար՝ 5—10 համար միասին եկան. և կամ ամիսներով ոչ մի համար չի հասնում: Եւ կամ առաջի համարները յետոյ, վերջի համարները առաջ են գալիս...»

«Ռուսաստանում ընդամենը չորս լրագիր են հրատարակուած, որոնցից երկուսը համարեա ձեւական, այս վերջինների բարբառներն անգամ տարբեր են. մէկը «ղրղբերէն», իսկ միւսը «սարթերէն»: Սրանց թէ բովանդակութիւնը և թէ շրջանը շատ նեղ է. մեր թաթարները նրանց գոյութեան մասին անգամ անտեղեակ են: Մնացեալ երկուսը ծանօթ են արդէն. «Թէրջիման» և «Շարքի-Ռուս», որոնք իրանց ջանքը չեն խնայում ծառայելու համար մեզ՝ թաթարներին, և այս պատճառով էլ բոլոր թաթարները անհրաժեշտ պարտականութիւն ունին նրանց կարդալու և քաջալերելու:»

Ընթերցողները կարդալով այդքան իսլամական հրատարակութիւնների անունները, ընականաբար պիտի հետաքրքրուին իմանալու, թէ ի՞նչ գործ են կատարում դրանք: Դատելով մահմեդական աշխարհի ներկայ վիճակից, կարելի է հաստատապէս ասել—հչինչ: Նրանցից մի մասը՝ երբեմն-երբեմն խիստ յօշուածներ հրատարակելով թիւրք կառավարութեան դէմ, ձգտում է շանտաժի—կորզել փող, պատիւ ու պաշտօն: Իսկ մի այլ մասը վայելում է արդէն Նորին Վեհափառութեան «կարմիր Սուլթանի» բարձր շնորհը՝ հնչուն քաջալերութիւններով...

Տիգրան